«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրականում:

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Նառա Ղազարյան

Ուսումնական հաստատություն՝ Կաքավաձորի Մ.Մխիթարյանի մ/դ

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1: Տարրական դասարանների երեխաների կողմից գեղարվեստական գրականության ընկալման առանձնահատկությունները:

1.1Գեղարվեստական գրականության դերը տարրական դասարանների երեխաների կյանքում և դաստիարակության գործում..... 6

Տարրական դասարաններում սովորող երեխաների զարգացման արդի խնդիրները ..7

Գեղարվեստական գրականության ուսուցումը լավագույն միջոցներից է.....9

Տարրական դասարանների երեխաներին իրենց արմատներին ծանոթացնելու, հայեցի մտածողություն ու դաստիարակություն սերմանելու համար..... 10

Հեքիաթ.....13

Տարրական դասարաններում սովորող երեխաների առանձնահատկությունները 15

Առած-_____18

Ասացվածք.....19

Եզրակացություն 22

Ներածություն

Այսօր մեր երկրում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում տեղի են ունենում համակարգչային ու արմատական փոփոխություններ՝ պայմանավորված ոչ միայն զարգացման ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական, սոցիալ մշակույթային գործոններով:

Եվ միանգամայն հասկանալի է, որ նման իրավիճակում հանրակրթության բարեփոխումն ու առաջանցիկ զարգացումը դառնում են խիստ արդիական ու անխուսափելի:

Այս համատեքստում տարրական դասարանների երեխաները, որպես՝ հանրակրթության առաջին և կարևորագույն օղակ, իրենց զարգացման որակական փուլն են ապրում: Վերջինս պայմանավորված է տարրական կրթության նպատակների գերապատվությունների ու կողմնորոշումների արմատական փոփոխություններով, որտեղ ավելի ու ավելի հստակորեն առաջին պլան են մղվում կրտսեր դպրոցականի անձի ձևավորումը, նրա գիտակցության ու կարողությունների զարգացումը:

Հասարակական կյանքի արագընթաց փոփոխություններն անհատից պահանջում են ցանկացած իրավիճակում ճկուն գործելու, ծագող խնդիրները ստեղծագործաբար լուծելու հմտություն: Այդպիսի ուսուցման հնարավորությունը պայմանավորված է երեխաների զարգացման բարձր մակարդակով, դպրոցական կյանքին նրանց նախապատրաստության բավարար աստիճանով:

Գլուխ 1: Տարրական դասարանների երեխաների կողմից Գեղարվեստական գրականության ընկալման առանձնահատկությունները:

1.1Գեղարվեստական գրականության դերը տարրական դասարանների երեխաների կյանքում և դաստիարակության գործում:

Գեղարվեստական գրականության զարգացման հիմքում ընկած է ժողովրդի գեղարվեստական խոսքը՝ ժող. երկեր, հեքիաթներ, առակ, առած, ասացվածքները և այլ բնույթի բանավոր ստեղծագործություններ, որոնք դարեդար ուղեկցել են երեխաներին և դաստիարակել նրանց:

Գեղարվեստական գրականությունը մատաղ սերնդի դաստիարակության կարևոր միջոցներից է: Այն ընդլայնում է երեխայի մտահորիզոնը, նրան գիտելիքներ է տալիս, ձևավորում է աշխարհայացք, հարստացնում է կենսափորձը, մշակում բնավորության դրական գծեր՝ ազնվություն, հայրենասիրություն, աշխատասիրություն և այլն: Կոփում է երեխայի կամքը, հարստացնում երևակայությունը, այն մշակում է նաև էսթետիկական ճաշակ, գեղեցիկի զգացում:

Տարբեր տարիքի երեխաների համար գրված դասագրքերը միմյանցից տարբերվում են թե թեմայով, թե ծավալով, թե բովանդակությամբ և թե գրվածքների գեղարվեստական ձևերով: Երեխայի մոտ փոքր հասակից դաստիարակվում է ոչ միայն բանականությունը, այլև գեղարվեստական ճաշակը, գեղեցիկի զգացողությունը:

Երեխայի համար ամեն ինչ նոր է, գեղեցիկ կամ սարսափելի, և այս բոլորը նրան երևակայության թռիչք է տալիս: Դրա համար էլ մեծահասակները, հատկապես մանկագիրները, ուսուցիչները ամեն ինչի մասի պատմելիս պետք է մտածեն, որ այդ խոսքը չոր ու ցամաք չլինի, այդ խոսքը պետք է լինի նուրբ, երբեմն ռոմանտիկ, մի խոսքով հետաքրքիր, որը հավասար է գեղարվեստականին:

Տարրական դասարաններում սովորող երեխաների զարգացման արդի խնդիրները;

Տարրական դասարաններում ուսուցումը կարելի է իրականացնել՝ ապահովելով յուրաքանչյուր առարկայի այդ թվում և գրականության դասավանդման գիտական մակարդակը:

Սակայն պետք է նկատի ունենալ այն, որ նշված տարիքի երեխաների համար գեղարվեստական գրականությունն առաջին անգամ հատուկ ուսումնական առարկայի նշանակություն է ձեռք բերում և այդ պատճառով բարդանում է նրա յուրացումը, որն անհրաժեշտ է հանգամանորեն կազմակերպել ու իրականացնել: Ուստի, երեխաների մտավոր գործունեության կառավարման պայմաններում նրանց կողմից գեղարվեստական գրականության յուրացման առանձնահատկությունների բացահայտումը չափազանց կարևորվում է:

Այդ ձևով հնարավոր կլինի՝

1. *Ուսումնասիրել երեխաների մտածողությունը առանձնահատկությունները*
2. *Որոշել օգտագործվող ստեղծագործությունների մանկավարժական արժեքը*
3. *Կատարել գրականության հաջող ընտրության և այն օգտագործել արդյունավետորեն:*

Այս հարցի ուսումնասիրումն արդի փուլում կրում է կոմպլեքսային բնույթ և իրականացվում է տարբեր գիտությունների սահմանագծերում: Գիտնականները փորձում են ուսումնասիրել, մի կողմից՝ արվեստի, ամբողջությամբ վերցրած և մասնավորապես, նրա առանձին տեսակների, այդ թվում և գրականության պատկերային կառուցվածքը գեղարվեստական գործունեության օնտոգենզի (անհատի զարգացման) բոլոր աստիճանները, մյուս կողմից՝ գեղարվեստական ընկալումը մարդկային կյանքի տարբեր փուլերում:

Այս ուսումնասիրությունների հիմքում, որպես մեկնակետ, դրվում է այն հայտնի ըմբռնումը, ըստ որի արվեստն իրականության պատկերավոր վերարտադրությունն է: Բելինսկու խոսքերով՝ պատկերավոր մտածողություն, որը տարբերվում է մարդու գործունեության մյուս ձևերից:

Ապացուցված է, որ մարդու գործունեության այդ առանձնահատուկ տեսակի արդյունքը կարևոր նշանակություն ունի մարդու անձնավորության ձևավորման, նրա համակողմանի զարգացման համար: Անառարկելի է արվեստի դերը այն շրջանում, երբ հիմնականում դրվում է մարդու անձնավորության հիմքը և դպրոցականի ուսուցման նախահիմքը:

Գեղարվեստական գրականության ուսուցումը լավագույն միջոցներից է տարրական դասարանների երեխաներին իրենց արմատներին ծանոթացնելու, հայեցի մտածողություն ու դաստիարակություն սերմանելու համար:

Ապացուցված է, որ այդ տարիներին երեխան աչքի է ընկնում վերին աստիճանի ուսանելիությամբ և չափազանց վառ տպավորություններով:Շրջապատող աշխարհը երեխան վաղ տարիքում տեսնում է այլ ձևով, քան չափահասության տարիներին: 6-7 տարեկանի համար զարմանալիորեն հետաքրքիր է շրջապատող առարկայական աշխարհի ամեն մի իր, ամեն մի կենդանի էակ: Տարրական դասարաններում սովորող երեխաները կյանքը ընկալում են անմիջականորեն, իսկ տպավորությունները պահպանվում են ամբողջ կյանքում: Գրական լավագույն ստեղծագործություններն իրենց առանձնահատուկ արվեստով կարողանում են հավասար ուժգնությամբ ազդել երեխաների և զգացմունքների վրա՝ դրանով իսկ փոխելով ու հարստացնելով կյանքի ընկալումը: Հայտնի է, որ այդպիսի ընկալում հնարավոր է միայն այն ժամանակ, երբ երեխան պատկերացնում, մտոք տեսնում է ընթերցումը, համազգում է գեղարվեստական երկի հերոսներին: Սրանից հետևում է, որ գրականության ազդեցությամբ զգայական ընկալումը վերափոխվում է իմաստային առարկայական ընկալման, որի շնորհիվ էլ անցում է տեղի ունենում ցածր մակարդակի ընկալումից առավել բարձև մակարդակի: Դրան նպաստում է այն, որ գրականության

ազդեցությամբ վերափոխում են նաև հիշողության պրոցեսները : Գրական տեքստի ընկալման ժամանակ տեղի է ունոնում ավելի շուտ ստացած գիտելիքների, տպավորությունների վերարտադրում ոչ միայն արտաքին իրադրությունների հետևանքով, այն գրական խոսքի միջոցով, որը փոխարինում է իրադրությանը:Այսպիսի երևույթը երեխայի մեջ առաջացնում է շրջապատի կյանքը դիտելու նոր հետաքրքրություն, որը խիստ կարևոր է մանկավարժական տեսակետից: Սակայն, որպեսզի գեղարվեստական գրականությունը հաջողությամբ կատարի իր կրթադաստիարակչական առաքելությունը, անհրաժեշտ է հատկապես կազմակերպել նրա ընկալման պրոցեսը՝ հաշվի առնելով երեխաների տարքային առանձնահատկությունները: Երեխաների հետ տարվող աշխատանքում այնպիսի մեթոդների կիրառումը, ինչպիսիք են

1. ընթերցանությունը,

2.պատմությունը,

3.վերապատմումը,

4. զրույցը,

հնարավորություն է տալիս բացահայտել գրական նյութի հիման վրա տեղի ունեցող ճանաչողական պրոցեսի բնույթը և բնութագրել այն մի շարք ցուցանիշներով, մասնավորապես գիտելիքների յուրացման աստիճանով և բանականության որակական առանձնահատկություններով՝ դատողությունների ինքնուրույնությամբ, քննողականությամբ, ընդհանրացմամբ:

Նման մոտեցումը ելնում է այն սկզբունքից, որ ճանաչողական հետաքրքրությունների առկայությունը, երեխայի մտավոր ակտիվությունը կնպաստեն մտավոր գործունեության ինտենսիվացմանը գիտելիքների ձեռքբերման ուղղությամբ ընդհանրապես և դրանով իսկ դրական ազդեցություն կունենան ճանաճողական ընդունակությունների Ա. Հարությունյան 9 զարգացման վրա, զարգացում, որը կիրականանա գիտելիքների յուրացման ամբողջ շրջանում: Երեխայի վրա գեղարվեստական գրականության ազդեցության այդպիսի արդյունքներ կարելի է ստանալ բնութագրերի դեպքում.

1.Գիտելիքների յուրացման տեմպը

2. Ուրիշների՝ ուսուցիչների, ընկերների օգնության բաժինը

3.Գրական նկարագրությունների էական հատկանիշները բացահայտելու ընդունակությունը

4.Տարբերության և նմանության հատկանիշների գիտակցումը այս հիման վրա համեմատելու, վերլուծելու համադրելու կարողությունը:

5.Նոր գիտելիքներ ստանալու ինքնուրույնությունը:

Ուսումնասիրելով բնութագրերի փաստական փվյալները Ի.Լեռները և Ն. Պ Սակուլինան հանգել են այն եզրակացության, որ դրանցում ամփոփվում են սուբեկտիվ և օբյեկտիվ արդյունքներ:

- Սուբյեկտիվ, երբ ստացված նոր արդյունքը(նկար, պատմվածք, երգ, խաղ) Նշանակալից է նախ և առաջ երեխայի համար,
- Օբյեկտիվ, որտեղ ստեղծագործական գործունեությունից բխում է հոգևոր զարգացումը՝ որպես արդյունք:

Բնութագրելով գեղարվեստական ստեղծագործությունը՝ մանկավարժ Ա. Ա Վոլիկովան ստեղծագործական գործընթացը համարում է մտքի, գիտելիքի, մտածողության և երևակայության զարգացման լավագույն միջոց:

Ստեղծագործական գործունեության միջոցով երեխայի մեջ զարգանում են մի շարք անձնային որակներ՝ համարձակություն, աշխատասիրություն, գթասրտություն, ուշադրություն: Երեխաները զգում են շրջապատող աշխարհի գեղեցկությունը ձևերի, գույնի բազմազանության Մեջ:

Այստեղից կարելի է եզրակացնել, տարրական դասարանի երեխաները միատեսակ չեն ըմբռնում գրական ժանրերը: Նրանց հրապուրում է հատկապես հեքիաթը, որի հաջող հաղորդման դեպքում իմացական պրոցեսն արագ է կատարվում, ընկալման համեմատական և համադրական գործողություններն իրականացվում են ոչ թե

երեխայի երկարատև «որոնումների» շնորհիվ, այլ մեկ, երկու փորձ կատարելու ընթացքում:

Հեքիաթ

Հեքիաթները ժողովրդական բանայուսական ամենահին և տարածված ստեղծագործություններից են:Մեզ են հասել հնագույն առասպելական ժամանակներից, սկզբում՝ բանավոր, հետո գրավոր: Տարական դպրոցի դասագրքերում առկա են ինչպես հայ ժողովրդական հեքիաթներ, այնպես էլ այլ ազգերի բազմաթիվ հեքիաթներ: Այդ հեքիաթները ոչ միայն ժողովրդական

հեքիաթներ են այլև դրանց գրական մշակումները՝ աշխատանքի և աշխատասիրության, խորամանկության և ագահության, ընկերասիրության ու հավատարմության մասին: Հեքիաթը երեխային հասնում է որոշակի մտահանգման, նպաստում գեղարվեստական նկարագրություններում գտնել տարբեր կախվածությունների միջև եղած կապը: Հեքիաթի ուսուցումը չպետք է սահմանափակվի կարդալ-վերլուծելով կամ նկարազարդելով:

Հեքիաթի ուսումնասիրման դասաժամերին պետք է կատարվեն բազմաբովանդակ աշխատանքներ: Օրինակ՝

1.Հեքիաթի համար ընտրե՛լ նոր վերնագիր

2.Գրառե՛ք հեքիաթի գաղափարն արտահայտող առածասացվածքներ

3.Տ-աձև աղյուսկի միջոցով առանձնացնել՛ բարի ու չար հերոսներին

4.Ո՞ր հերոսին աշակերտները կուզեն նմանվեն

5. Բեմականացնե՛լ հեքիաթից հատվածներ

6.Խճանկարներն ամբողջացնելով ստանալ՛ հեքիաթի նկարազարդում:

Որոշակի մանկավարժական պայմանների առկայության դեպքում գրականության բովանդակության փոխանցումը կյանք տեղի է ունենում հաջողությամբ, և հեքիաթի միջոցով ձեռք բերած գիտելիքները երեխան օգտագործում է բազմատեսակ գործունեության ընթացքում:

Աշխատանքը՝ Հովհանես Թումանյանի «Չարի վերջը»,«Շունն ու կատուն», «Կիկոսի մահը»,«Ճամփորդները» Դերենիկ Դեմիրճյանի «Պույպույմուկիկը» հեքիաթներով հնարավորերություն է տալիս ասելու, որ հեքիաթներում ծավալվող իրադարձություններն իրենց բառային կրկնություններով հարազատ, մատչելի են երեխաներին և համապատասխանում են նրանց հետաքրքրություններին: Հեքիաթներում թաքնված հեքիաթայնության, անիրականության հորինվածության տարրերը երեխային թույլ են տալիս նկարագրված երևույթները վերապրել իր համար առավել ցանկալի ձևով՝ դրանք համապատասխանեցնելով իր մտածողության տարիքային առանձնահատկություններին: Նկարագրությունների

հեքիաթայնությունը երեխային հնարավորություն է տալիս ազատ լինելու իր զգացմունքներում, մտքերում, ցանկություններում և գոյություն ունեցող իրական կյանքին նայել երևակայողի աչքերով՝ համատեղելով գոյություն ունեղոց իրականը մտածածինի հետ, այսինքն՝ նախադրյալ է ստեղծում մանկական ստեղծագործական երևակայության համար, որը ցայտուն կերպով արտահայտվում է հատկապես մանկական նկարներում:

Սովորաբար երեխաները, համակրելով դրական հերոսին՝ նրան նկարում են խնամքով, մեծ չափերով, օգտագործում վառ գույներ: Բացասական՝ չար, վտանգավոր հերոսին պատկերում են մռայլ գույներով, անխնամ, իհարկե, դիտավորյալ հաճախ նրա վրա ներկեր են թափում, թուղթը պատառոտում հատկապես այն մասերում, որտեղ նկարված է աչքերը, քիթը, բերանը:

Տարրական դասարաններում սովորող երեխաների առանձնահատկությունները:

Տարրական դասարաններում սովորող երեխաներին բնորոշ առանձնահատկություններից է նաև այն, որ նրանք զարմանալի ներբազգացողությամբ որսում են ճշմարտացին և ոչ մի կերպ չեն հաշտվում մտացածին, շինծու երևույթների, խաբեության հետ՝ տարբերելով դրանք գեղարվեստական չափազանցությունից:

Այսպես «Ճամփորդները» հեքիաթը, ունի իր յուրօրինակ ճանաչողական ուժը: Ամեն մի հեքիաթի մեջ կա իրականության տարրեր, եթե մենք երեխաներին հրամցնեք մի այնպիսի հեքիաթ, որտեղ աքաղաղն ու աղվեսն չեն խոսում մարդկային

լեզվով, երեխաները չեն հետաքրքրվի այդ հեքիաթով: Երեխաներին հետաքրքրում են ոչ միայն հեքիաթների, նրանց օգնող կենդանիների ու թռչունների, կախարդական քնի, ոսկե հավքի կամ անմահական ջրի և բազում այլ ֆանտաստիկերևակայական պատմությունները:Նրանք գիտեն, որ հեքիաթում աքաղաղը եղել է և մնում է աքաղաղ: Այս հեքիաթում երեխաները սիրով են հաշտվում աղվեսի ստի, խորամանկության և նրա նենգա մտության հետ՝ նախապես իմանալով, որ նրանք բոլորը հորինված են: Նրանք տեսնում են, որ ամենա-ամենա հավատարիմը՝ շունն է:

Ինչպես տեսնում ենք, գրական սիրելի հերոսի վարքագիծը երեխայի համար ստանում է ընդհանրացման ֆունկցիա:

Դրա պատճառն այն է, որ գրական նկարագրություններում առկա են դրամատիզմ, կոնֆլիկտայնություն , դրսևորվում է հերոսականություն, որն ազդում է երեխայի հոգեբանության վրա, սուր կերպով շոշափում նրա զգացմունքային ապրումների ոլորտը: «Իսկ ինչ՞ կլինի հետո, ո՞վ կհաղթի, ինչո՞վ կվերջանա այս ամենը» ահա այն հարցերը որոնք անհանգստացնում են երեխային և հիմք ծառայում անկեղծորեն վերապրելու գրական հերոսի արարքները: Ս. Դեմիրճյանի «Պույպույ մուկիկը», Աթաբեկ Խնկոյանի «Ագռավն ու Աղվեսը», «Աղվեսն ու կռունկը» և բազմաթիվ այլ ստեղծագործություններ (գրված ոչ միայն հեքիաթի, այլ նաև ուրիշի ժանրերով) դրա ապացույց են :

Զարմանալի է այն, որ երեխաները ավելի արագ են որսում, ավելի երկար մտապահում, ավելի լավ իմաստավորում բացասական գրական հերոսի վարքը, քան դրականինը: Ուստի նման երևույթը մանկավարժին հուշում է գրական բացասական հերոսի վարքագծի խոր իմաստավորման հիման վրա՝ հակադրության միջոցով, երեխաներին սովորեցնել հասկանալ և գնահատել դրական հերոսների բարի գործերը:

Առած-ասացվածք

Առածը ունի փոխաբերական իմաստ:

Ասացվածքը ուղղակի խոսք է, չունի փոխաբերական իմաստ և այլն:

Առած-ասացվածքները պատկերավոր ու սեղմ ասույթներ են կյանքի, մարդկանց արած ու չարած գործերի, կենցաղային տարբեր երևույթների վերաբերյալ:

Տարրական դասարաններում սովորող երեխաների դասագրքերում ընդգրկված են բազմաթիվ առակներ, որոնք բոլորն էլ խտացրած տեսքով արտահայտում են տվյալ դասի բնագրի հիմնական միտքը: Առածները երեխաների համար պետք է լինեն հասկանալի:

Առածի միջոցով զարգանում է երեխաների լեզվամտածողությունը:

Նրանք հեշտությամբ անգիր են անում դրանք և կիրառում իրենց խոսքում:

1. «Երկաթը տաք-տաք կծեծեն»- այսինքն գործը չեն ձգձգի:

2. «Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք»- այս առածի միջցով փորձում է խրատել, ինչպես նաև դաստիարակել, սերմանում է միասնության, համախմբվածության գաղափարը:

3. «Ուրիշի համար փոս փորողն ինքն է ընկնում մեջը»-ուսուցանում է, որ հարկավոր չէ դիմացինին վատություն անել, քանի որ ինքն էլ կարող է ընկնել նույն իրավիճակի մեջ:

4. «Խոսքը՝ մեծին, ջուրը՝ փոքրին»- երեխաները պետք է քիչ խոսեն, չխառնվեն մեծերի խոսքին:

Առածները մեծ դեր կարող են ունենալ անձի վարքի կարգավորման գործում: Առածի միջոցով ամփոփվում, ի մի է բերվում բնագրի արտահայտած հիմնական միտքը:

Ասացվածքներ

Ասացվածքներ արտահայտված են ուղղակի խոսքով, ինչպես ասում ենք, այնպես էլ հասկանում ենք:

1. «Ամեն բանի սկիզբն էլ դժվար է»

2. «Այսօրվա գործը վաղվան չեն թողնի»

3. «Արածիդ մասին շատ մի խոսիր»

Այսինքն՝ պետք չէ ծուլանալ, ասել՝լավ, վաղը կանեմ:Եթե այսօր չանես, կարող է վաղը ուշ լինել, կամ սկզբում ամեն ինչն էլ դժվար է թվում, պետք չէ ծուլանալ, ասել՝դժվար է և ցանկացած գործ անելուց պետք չէ ցուցադրել և գլուխ գովալ:

Առածները և ասացվածքները բացառիկ խորությամբ արտահայտել են աշխատավոր ժողովրդի մտածողությունը, նրա սոցիալ պատմական փորձը, ավանդույթները, իրականության նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքը:

Հանելուկը երևույթի կամ առարկայի հակիրճ փոխաբերական նկարագիրն է, որտեղ քողարկված ձևով տրվում են կռահվող երևույթի հատկանիշները: Հանելուկը ստիպում է երեխային խորհել և գտնել տվյալ առարկան կամ երևույթը, որի մասին խոսվում է: Հանելուկը զարգացնում է երեխայի մտածողությունը, դիտողականությունը և հիշողությունը.

1.Գալիս է հուշիկ,

Կարմիր են դառնում

Ականջ ու թուշիկ,

Մեծը մրսում է,

Փոքրը դրսում է:

Հայտնի է, որ տարրական դասարաններում սովորող երեխաների գլխավոր գործունեությունը խաղն է, որը նրանց զարգացող անձնավորության կենսական պահանջն է:

Դրանով կարելի է բացատրել այն, որ տարրական դասարանների երեխաները հրապուրվում և սիրում են այն գրական ստեղծագործությունները, որոնք տրված են խաղային ձևով:

Ընկալելով այդպիսի ստեղծագործությունը՝ երեխան իրեն պատկերացնում է խաղի մասնակից և կարծես դառնում իր համար սիրելի դերի անձնավորողը: Դրա շնորհիվ ակտիվանում է նրա վերլուծական-համադրական կարողությունը, որը և

ռեալ հնարավորություն է ստեղծում գործնականում օգտագործելու ձեռք բերած գիտելիքները:

Նշված փաստը թույլ է տալիս տարրական դասարանների դպրոցականների հետ աշխատող մանկավարժներին խորհուրդ տալ չմոռանալ խաղի կրթական-դաստիարակչական դերը երեխաների կյանքում, չշտապել զրկելու նրանց խաղի պատճառած ուրախությունից, երազանքների աշխարհին: Լավ կլիներ գրականության ցանկի մեջ մտցնել խաղային ձևով տրված մանկական ստեղծագործություններ: Բոլորիս հայտնի է, որ երեխաները սիրում են հարցեր տալ: Այդ հարցերը նրանց շրջապատող աշխարհը ճանաչելու մեծ ցանկության, ինչպես նաև կենսափորձին վերաբերող հասկացությունների, պատկերացումների սահմնափակ լինելու ցուցանիշներն են: Լավ գրականությունը լուծում է այդ պրոբլեմը:

Մ.Գորկին գրել է. «Յուրաքանչյուր գիրք իմ առաջ լուսամուտ էր բացում դեպի նոր, անծանոթ աշխարհ, պատմում ինձ մարդկանց նրանց զգացմունքների, մտքերի և հարաբերությունների մասին, որոնք ես չգիտեի և չէի տեսել»:

Աշխատանքը երեխաների հետ ցուց է տալիս, որ եթե գրական տեքստը կառուցվում է հարցերով և պատասխաններով, ուժեղանում է մանկան ուշադրությունը նրա բովանդակության վրա, որի շնորհիվ հաջողությամբ է տեղի ունենում մտապահման պրոցեսը

. *-Ու՞ր գնացին ծաղիկները,*

-Սուս, քնածեն հողի տակ,

Տաք ծածկված ողջ ձմեռը

Ձյուն-ծածկոցով սպիտակ:/Հ. Թ/

« Ու՞ր գնացին ծաղիկները» հարցով անմիջական կապ, սրտակից զրույց է ստեղծվում մեծ բանաստեղծի և փոքրիկի միջև: Երեխան, կարծես մասնակից է դառնում նկարագրվող իրադարձություններին:

Խնկո- Ապոր, Ս. Կապուտիկյանի , Մկրտիչ, Կորյունի, Ղ. Աղայանի Ս. Մուրադյանի և Հայ այլ մանկագիրների բազմաթիվ ստեղծագործությունները մանկավարժական տեսակետից արժեքավոր են, որովհետև դրանց միջոցով երեխան ոչ միայն իրեն հետաքրքրող հարցերի լիարժեք պատասխանն է ստանում, այլև ինքն է փնտրում ու գտնում դրանք:

Հարցերը ակտիվացնում են բանաստեղծությունն ընթերցող/լսող/ երեխային ճանաչողության կարողությունը:

Գրականագիտական տեսակից հետաքրքիր և մանկավարժական տեսակետից արժեքավոր պետք է համարել նաև հեղինակի կողմից ընթերցողին դիմելու հատուկ ձևը:

Բացում եմ քո դեմ

Ես մի ողջ աշխարհ

Տանում քեզ հեռու Ծովերի գիրկը: /Վ. Հովսեփյան/

Գիտական տեքստում հերոսների միջև հատուկ, պարզ երկխոսությունների առկայությունը, ինչպես ցույց է տալիս աշխատանքը երեխաների հետ, արագացնում և որակապես բարելավում է որոշակի գիտելիքների ըմբռնումը, ինչպես նաև ստեղծագործության բարոյական հիմքի ընկալումը:

Տեր- Գրիգորյան «Գիրք, որն ընթերցող էր փնտրում», «Որ՞ն է կարևորը», «Վարդանի սխալը», Վ. Օսեևա «Ընկերները», Լ. Միրջանյան«Զրույց հեռախոսով» և այլը: «Ես ձեռք չեմ տվել» և այլ պատմվածքների օգտագործումը ցույց է տալիս, որ երեխաները երկխոսության միջոցով հաջողությամբ են ըմբռնում վատ և լավ արարքները, տարբեր բարոյական հասկացությունները:

Եզրակացություն

Հայ մանկական գրականությունը հարուստ է հայրենի բնության նկարագրություններով: Դրանք իհարկե, հարկավոր են երեխաներին, սակայն, ցավոք, այդ նկարագրությունները երբեմն ինքնանպատակ են և չեն հարստացնում երեխայի ճանաչողական փորձը:Չի կարելի մոռանալ նայն այն ստեղծագործությունները, որոնք երեխաների համար շատ բարդ են:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ տարրական դասարանների երեխաները միատեսակ չեն ըմբռնում գրական ժանրերը: Նրանց հրապուրում է հատկապես հեքիաթը, որի հաջող հաղորդման դեպքում իմացական պրոցեսն արագ է կատարվում, ընկալման համեմատական և համադրական գործողություններն իրականացվում են ոչ թե երեխայի երկարատև «որոնումների» շնորհիվ, այլ մեկ, երկու փորձ կատարելու ընթացքում:

Այն գրական ստեղծագործությունները, որոնցում բնության նկարագրությունների հիմքում ընկած է գաղափարների ենթատեքստ, ակտիվացնում են երեխաների մտածողությունը, հարստացնում նրանց կենսափորձը:

Լավ կլիներ գրականության ցանկի մեջ մտցնել խաղային ձևով տրված մանկական ստեղծագործություններ: Գեղարվեստական գրականության ընկալումը տարրական դասարանների երեխաների անձնական զարգացման պարտադիր բաղադրիչ է: Գրականությունը պատմական փաստերի պահեստ է, նախորդ սերունդների փորձը, անցյալի և ներկայի հիմնական փիլիսոփաների մտքերը: Գրականությունը համարվում է արվեստ, որը պարզ բառերի օգնությամբ ազդում է գիտակցության վրա: Բացի այդ, գրքերի սերը ներշնչվում է հենց սկզբից, նաև այն պատճառով, որ ընթերցանությունը զարգացնում է երևակայությունը, սովորեցնում է պատկերացնել իրավիճակներ և նկարներ նկարել:

Այսքանով, բնականաբար, չեն սպառվում տարրական դասարանների երեխաների կողմից գեղարվեստական գրականության ընկալման առանձնահատկությունն:

Օգտագործած գրականություն

1.Հայոց լեզու և գրականություն,, ամսագիր 3-4.2002

2.Կրթություն,, շաբաթաթերթ 15 հուլիսի,2017

3.Լև Վիգոտսկի, Պատմամշակութային հոգեբանություն, Ազատ հանրագիտարան

4.ԿՏԱԿ, 2017-2018 ուստարվա պահոց

5.ԿՏԱԿ, 2018-2019 ուստարվա պահոց

6. Ուսուցչի օրագիր

7.Ուսուցչի գրադարան

8.Այդան Չեմբերս, Պատմել, Ընթերցանություն

19.Դավիթ Գյուրջինյան, Թամար Ալեքսանյան, Աշոտ Գալստյան, Մայրենի, Ուսուցչի ձեռնարկ 5-6: